

նաուու մը մեծատարր զանգուածն պառկած էր, որուն վանդակակերպ կողերն և ատաղձն նախա ջրհեղեղեան կէտ ձկան մը աւազի վրայ զարնուած կմախից կը նմանէին: Քովս կեցողներէն մէկն ըսաւ, « Դա է Մեծ Արեւելեանն » Great-Eastern.

ԱՄՖՈՆՍ ԵՍԿԻՐՈՍ

ՊՐԱՀՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԸ

(Տես երես 303)

Որչափ որ Պարսկաստանի երկիրները կը մօտենար, քաղաքները մեծաւ մասամբ իրեն անապատ կը տեսնուէին և դաշտերը մերկացած: Կար շռայլութիւն մը առանց արգասեաց, և պաճուճանք առանց առատութեան: Սակայն Պարսիկք երկիւղած և ներողամիտ երեցան Պրահմանին, թէպէտ և վեհանձնութիւն չունէին՝ բայց գիտէին իրենց ամենայն գործը շնորհալից կերպով ընել: Նարա-Մունի ըսաւ ինքն իրեն. « Խօսքերնուն չեմ վստահիր, և ոչինչ նուազ չեմ ախորժիր իրենց կենցաղավարութիւնը՝ որ արուեստական կերպ մ'ունի. միայն այն ատեն ստոյգ կատարելութիւն կրնայ սեպուիլ երբ սրբոյն անկեղծութենէ առաջ գայ »:

Ծեր մոլլա մը որ Հնդկաստանէն ծանօթացեր էր, շատ մը առածներ արտաբերեց իրեն, որոնց մեծ դժուարութեամբ կրցաւ ընտրութիւն մը ընել: Ահաւասիկ այն ինն հատ որոշածները՝ որք այս ժողովուրդը զուարճութեան բարեկամ, մասնաւորապէս հիւրընկալութեան մէջ առաքինի նկարագրող երեցողին իրեն:

Քաղաքավարութիւնն որոշեալ գրամ մըն է որ կը հարըստացնէ թէ ընդունողը և թէ վճարողը: Մարդ մը մինչքեռ գիտութիւնը կը փնտռէ՝ ի մաստուն կրնայ ըսուիլ, բայց անմիտ է եթէ կարծելու ըլլայ թէ գտած է:

Տգիտութիւնը յոռի երիվար մ'է, որ վար կը զլորէ ով որ վրան հեծնայ, և իր առաջնորդը ծողրել կու տայ:

Առատաձեռն մարդուն պարգևը ճամբիտ ընծայ մ'է, չահասէր մարդունը խնդրուածք:

Ողորմութիւնը հարստութեանց աղն է, առանց անոր կ'ապականի:

Երկու բաներ անբաժանելի են ստախօսութեանէ, շատ խոստմունք և շատ ջատագովութիւնք:

Աւաղ այն ազգին՝ որոյ երիտասարդք ծերութեան մոլութիւններ կ'երեցնեն վրանին, և ծերերը կը պահեն դեռ երիտասարդութեան ամենայն անկարգութիւնները:

Սակայն հոգւոյ ամենայն ազնուութեամբը զարդարուած ժողովրդեան մը այն հանճարեղ առածներուն մէջ կային երկու հատ՝ որ ինչուան իր սիրտը ազդեցին, յիշեցնելով անոր բնութեան ամենէն պատկառելի յիշատակները և առաքինութեան ամենէն աւելի քաղցր պատուիրանը: Մէկը, ըսաւ ինքն իրեն, բարի և զիտուն Բարվաթին է, որ կը քննէ բոլոր բնութեան առարկաները, իր մտածութիւնը դէպ ի Աստուած բարձրացընելու համար. միւսն իր ազնիւ հայրն է, որ կը հրաւիրէ զամեն մարդիկ գթութեան, որ միշտ կը մխիթարէ, թէ և չկարենայ ալ ձեռնտու ըլլալ:

Մառի մը իւրաքանչիւր կանաչ տերեւ՝ գիտունին աչքին գրքի թերթ մ'է՝ որ ստեղծողն էութիւնը կը սորվեցնէ:

Ով գու որ քաղցր քուն մը կրնաս վայելել, մըտածէ զանոնք, որոնց քունը կ'արգիլեն ցաւք: Ով գու որ կրնաս քաղել արագութեամբ, գթայ ընկերոջ վրայ որ չի կրնար քեզի հետեիլ: և գու որ մեծատուն ես՝ մտածէ զանիկայ որ խեղճութեամբ կ'ընկճի:

Նարա-Մունի այցելութեան ելաւ Ասպահանի ալ, և անոր չիլեալ պայծառութեանը վրայ զարմանալէն վերջը, Դէհրան դնաց, տէրութեան այժմեան մայրաքաղաքը: Տեսաւ հոն որ ժողովուրդն իր տգիտութեանը և աղքատութեանը դէմ ջանալով, դէպ իսկական լաւութեան կը դիմէր. շնորհիւ Եւրոպացւոց, որոնք անգաղար խորհրդատու են գահաժառանգին, և իրենց գիտութեամբը կ'առաջնորդեն անոր: Անկէց քանի մը բեղուն բայց քիչ մշակուած նահանգներէն անցնելով՝ Հիւրմիւզի ծոցը դնաց, ուսկից նաւ մտաւ Արաբիա երթալու համար, հիանալով պողատու պարտէզներուն վրայ, որոնց մէջէն տկար թուփ մը (խահուէ) քանի մը դար կայ, բոլոր աշխարհիս վաճա-

ռականութեանը և երկրագործութեանը նոր կերպարանք մը տուած է. անկէ ուղեց Եգիպտոս երթալ, անցնելով այն անապատները՝ որք երջանիկ Արաբիան այս գաւառներէն կը բաժնեն:

Անապատին մէջ, եթէ չկրցաւ սիրել ընտելութիւնը, բայց հիացաւ ահեղ երևոյթներուն վրայ՝ որք յատուկ են այս անապատացեալ միայնութեանը. երբեմն սիմունին վրայ, այն թխուր հովուն, զոր Արևելեայք թունաւորեալ հով կը կոչեն, որ ահագին աւազէ սիւներ կը բարձրացընէ, ևստէպ անթիւ կարաւաններ բանակներու պէս կը ջարդէ. երբեմն ալ մատաղցութեան (mirage) վրայ, խաբեբայ երևոյթ, որ յիշեցընել կուտայ քերթողին՝ յուսոյ պատրանքները, և անապատին վեհութիւնը կ'առաւելու երկնից զողջովուն ճառագայթումը կենդանացընելով:

Այս անհարթ, ահաւոր և առ աչօք ընտելեան մէջ՝ մարդուս վրայ դիտելիք ճշմարիտ առաքինութիւններ նշմարեց: Ասպնջականութեան խօսքերը միակ շրթթանց վրայ չէին, այլ իր սրտէն կը բլրէին: Օր մը սպառիչ տաքութենէ մը նեղուած, ծարաւը անցընելու կ'երթար որ զինքը կը սպաննէր. խեղճ Արաբացի մը զրկեց ինքզինքը և տուաւ անոր պահած տիկ մը յստակ ջուրը: Այս մեծաբանքէն զրդեալ, Պրահմանը ուղեց տալ անոր իր գործածած անդին մատանին, բայց Արաբացին չընդունեցաւ. « Ի՞նչ պիտի ըլլայ գաւաթ մը ջուրը, աղաղակեց մեծանձնութեամբ: — Յաւիտենականութեան վարձք, ըսաւ Պրահմանը, երբ անանկ տրուի՝ ինչպէս որ դուն ինձի տուիր:

Այս Արաբացւոյն կեանքը իրեն գերազանց պատկեր մ'ընծայեց, որ ալ աւելի սրտաշարժ եղաւ հետեւեալ դիպուածովն՝ զոր իրեն պատմեցին:

Քորեք ատենօք շատ ճանչցուած էր անապատին մէջ իր բարեսէր սրտովը, ինչպէս նաև իրեն քաջութեամբը և անկախ ազատասիրութեամբը: Ինքն էր որ իր նուագարանին ձայնովը կը զուարթացընէր տօները. ինքն էր որ ահաւոր

կ'ընէր անապատը ամենէն առաջ ցատքելով իր երազընթաց ձիուն վրայ, և կը թռչէր ի պատերազմ:

Իսկ հիմա Քորեք ալ չէր խօսեր, կը դարմանէր իր ձին, ալ աւելի սոսկալի պատերազմներու վազելու համար՝ քան ինչ որ ինչուան այն ատեն ըրած էր: Իրիկունները ընդհանրապէս իր վրանին դրան առջև կեցած՝ կը դիտէր արեւը՝ որ ընդարձակ դաշտին ծայրը կը մտնէր, և միտքը անդադար երջանկագոյն ժամանակի մը կ'երթար, ժամանակի մը՝ յորում ունէր որդի մը որ իրեն հետ տաղաւարին տակ բնակելով, իրեն աշխատանաց գործակից կ'ըլլար, և որ ամեն իրիկուն փառք կուտար Աստուծոյ որ իրենց ազատութիւն պարգևեր էր:

Այս խեղճ տղայն՝ երկու իրարու դէմ կռուող ցեղից ատելութեանը զոհ եղած էր անապատին մէջ, և մարմինը անդէպ լափեր էին, միայն արեան հեաքը մնացեր էր աւազներուն վրայ:

Քորեք կուլար լուութեամբ, և այս լուութեամբ կ'ուխտէր սրտին մէջ սոսկալի վրէժխնդրութիւն մը մարդասպանին դէմ ընելու, այնպիսի վրէժխնդրութիւն մը՝ որուն վրայ դեռ երկայն ժամանակ անապատին մէջ կը խօսուի. իսկ անոնք որ հոն կը բնակէին, ալ դադրեցան անկէ անցնելէն: Օր մը երբ իրեն ցաւալի յիշատակներովը միայն էր, ճամբորդ մը հասաւ իր տաղաւարը, Ուատըլիմ ցեղերէն կողոպտուած, և խընդրեց ապաստանարան մը՝ որ երբեք չի զլացուիր այս անապատ դաշտերու մէջ, ուր թշուառ մարդը քիչ մը ժամանակուան համար եղբայր մ'է մեզի, զրկուած անկէ՝ որուն ամենակարողութիւնը այս աւազէ ովկիանոսին մէջ կ'առաջնորդէ ուղտապանին: Քորեք ընդունեցաւ ճամբորդը, և իր զգեստներէն ճանչցաւ որ օտար ազգէ է, և իր ցեղը ալ մենկին բարեկամութեան երդումներ ըրած չէր, որք անապատին ցեղերը կը միանացընեն: Բաւական սեպեց Սէրսմ ալէքիշմ (խաղաղութիւն ընդ քեզ) ըսելը. և կերակուր հրամցուց անոր, ինչ որ կը տրուէր օտարականի:

Ճամբորդը, լուռ բոլորովին, լմնացուց իր ճաշը, և մինչ անդադար շնորհակալութիւններ կ'ընէր անապատին Աստուծոյն և իր հիւրընկալին, յանկարծ ֆորեքին սրտին մէջ սոսկալի կասկած մը մտաւ: Սակայն քիչ մը ժամանակ անշարժ կեցաւ, իբր թէ կը ջանար մեծ գէպքի մը պատրաստելու ինքզինքը, յետոյ հարցուց փախստականին իրենց եղին վրայօք. պատասխանը այնպիսի մ'եղաւ, որ սոսկալի դող մը տարածեց Արաբացւոյն երակներուն մէջ, և այնպէս մ'եկաւ իրեն՝ որ սէմունի ծախիչ շունչը՝ ցամքեցընելով իր արիւնը՝ իր կեանքը կը զաղրեցընէր: Երկրորդ հարցմունքին, յիշեցուց անոր անուն մը՝ որ մոռնել տուաւ իրեն անապատին առիւծուն պէս: Իր սուրը բռնելը և քաշելը, օտարականին աչքերուն մէջ շողացընելը արագ վայրկենի գործ մ'եղաւ. բայց այն ժամանակը բերաւ իրեն հետ իր վեհանձն մտախոհութիւնը: « Գնա, ըսաւ, դնա, սպանող որդւոյս, եթէ Աստուած չպատժեց գրեզ արեամբ, թող խղճիդ տազնապովը պատժէ: Չեմ ուզեր ամենեւին որ անապատին մէջ ֆորեքին անունը հիւրի մը սպանութեանը յիշատակաւ խառնուած մնայ: — Փախիր ուրեմն, հիւրս, փախիր. անապատը շատ մեծ է և մարդս շատ տկար »: Այս վերջին խօսքերը խուլ ձայնով մը աւելցուց կ'ըսեն, առանց ուղեւոր դարձեալ ձեռքը սուրին վրայ դնելով:

Մարդասպանը փախաւ, և կ'ըսեն թէ քանի մը ամիսէն ետքը, իր ցեղը ֆորեքին ցեղին հետ պատերազմ ընելէն դադրեցաւ. և անկէ վերջը զինքը վեհանձն հիւր անապատին կը կոչէին: Այս բանս ֆորեքին տաղաւարին տակ հանդիպեցաւ, ուսկից նարա-Մունի լըսեց այս գեղեցիկ խօսքերը և գրեց իմաստութեան գրքին մէջ. և քանի որ այն տաղաւարը միտքը գար՝ այս խօսքերը աւելի վսեմ կ'երևային իրեն:

Հարստութիւնները և աշխարհս կ'անցնին, բայց բարի գործերը կը մնան:

Համոզուած էր որ այնպիսի տղնիւ

առած մը ստացող, և ամեն օր կատարելու ջանացող մարդ մը՝ պէտք էր որ բարակ ընտրութիւն մը ըրած ըլլար շատ դարերէ՝ ի վեր անապատին նահապետներէն մնացած բոլոր առածներուն մէջ. հարցուց անոր հին իմաստութեան վրայօք, պատասխանեց Արաբացին. Զուրկ ենք երկրիս բարիքներէն, բայց Աստուծոյ խօսքերովը հարուստ: Եւ այս առածները շուտ մը Պրահմանին գրել տուաւ:

Ժուժկալութիւնը ծառ մըն է, որուն արմատը քիչով գոհ ըլլալն է, իսկ պտուղը հանդարտութիւն և խաղաղութիւն:

Ամառուան օրերուն մէջ մըջինի նմանէ. լուսաւորէ ջահգ՝ խաւարը համենէն առաջ:

Բերանդ լեզուիդ բանտը ըլլայ:

Ամենեւին հանգիստ չկայ նախանձոտին համար:

Լաւագոյն է մեղք չընելը, քան ապաշխարելը:

Ով որ կը խնդրէ բարեկամէն՝ կը ցածէն աւելին մերժման արժանի է:

Ամենէն գէշ մարդը այն է որ իր տաղանդը ուրիշներուն օգտին համար չի գործածեր:

Ժամանակը անցընելու համար՝ լաւագոյն ընկերը ընտիր գիրքն է:

Լաւագոյն առատածեռութիւնը աղքատինն է:

Ապահով եղէք որ չկայ այնպիսի մեծ զրկանք՝ որ աններելի ըլլայ:

Ով որ յաջողութեան ժամանակ բարիք չընէր, դժբաղդութեան ատեն սասաիկ կը կրէ:

Պէտք չէ ամբնալ չգիտցած բանը հարցընելու:

Որչափ կարճ պիտի ըլլար կեանքը, եթէ յոյսը անոր երկայնութիւն չի տար:

Ճամբորտութիւնը թէ և ատելի ըլլայ՝ մի. քաշուիր խոստովանելէն:

Ով որ գիտութիւն սորվելի և գիտցածը չգործածէ, նման է այն մարդուն որ կը հերկէ և չի սերմաներ:

Մենք հրատարակեալ գաղտնիքի մը գերի ենք, փոխանակ զի գաղտնիքն մեր գերին է որչափ որ կը ջանանք ծածկել:

Չափէ զամեն մարդ ըստ իրեն չափին:

Կը շարունակուի: